ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 22-ին՝ ուրբաթ.—*Երեկոյան ժամը 8-ին Վեհարանում գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։*

*
* *

Մարտի 23-ին՝ շաբաթ.—*Անպաշտոն կերպով Մայր Աթոռ ժամանեց՝ Անթիլիասի դպրեվանքի տեսուչ գեր. տ. Գարեգին եպս. Սարգիսյանը, որը մեկ շաբաթ մնալուց հետո Մայր Աթոռում, մեկնեց Մոսկվա։*

*
* *

Մարտի 24-ին՝ կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պանոց (Դատաւորին).

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։ Քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Պարտ է մեզ յամենայն ժամ աղօթս կալ և մի՛ ձանձրանալ» բնաբանով։

*
* *

Մարտի 30-ին՝ շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, սոսկալի շարշարանացն և մտին ի վիրապն.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց «Ի գրի ներքնումն իջեալ Նորին ջաղխէր նովաւ զգլուխ վիշապին» բնաբանով։

Նույն օրը Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց ճարտարապետական հանձնախմբի նիստ, ուր քննարկվեց Մայր Աթոռի և ս. Գեղարդի վանքի շինարարություններն արագացնելու ծրագիրը։

*
* *

Մարտի 31-ին՝ կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պանոց (Դալստեան).

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։ Քարոզեց գեր. տ. Գարեգին եպս. Սարգիսյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Ապրիլի 4-ին՝ հինգշաբթի.—*Երկշաբաթյա արձակուրդով Մայր Աթոռ ժամանեց Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր. հովիվ, Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը։*

*
* *

Ապրիլի 5-ին՝ ուրբաթ.—*Երեկոյան ժամը 7-ին Վեհարանում գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։*

*
* *

Ապրիլի 7-ին՝ կիրակի.—Ծաղկազարդ և Աւետումն Ս. Աստուածածնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։ Քարոզեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Զի ահա ձմեռն անց, անձրեւք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկք երեւեցան յերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում» բնաբանով։

*
* *

Ապրիլի 11-ին՝ հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց և խավարման արարողության ժամանակ քարոզեց հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը «Քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի» բնաբանով։

*
* *

Ապրիլի 13-ին՝ շաբաթ.—Աւագ շաբաթ ճրագալոյց Զատկի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպալյանը և քարոզեց «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ ընդունայն են քարոզութիւնքն մեր և ընդունայն են հաւատքն ձեր» բնաբանով։

Մ. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Ապրիլի 15-ին՝ երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ հայ ազգի համայն ննջեցյալների։